ԱՐԴ/1131/01/24
(ԵԴ1/2015/01/24)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 նոյեմբերի 2024 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի օգոստոսի 23-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Տիգրան Զավենի Սահակյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի

(այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 325-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 16194724 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի օգոստոսի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2015/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 24-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբորի 11-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 14-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի մայիսի 30-ի որոշմամբ Տիգրան Ջավենի Սահակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/0615/04/18 գործով 2018 թվականի հոկտեմբերի 15-ի վճռով սնանկ ճանաչված «Կոմս Արտի» ՍՊԸ-ի սնանկության կառավարիչ Լևոն Պետրոսյանի կողմից աճուրդի հանված, Նոնա Յուրիի Սարգսյանին պատկանող Երևան քաղաքի, Կոմիտասի պողոտայի, 57-րդ շենքի, 83-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը գնահատող փորձագետ, 2019 թվականի սեպտեմբերի 27-ին տվել է Երևան քաղաքի, Կոմիտասի պողոտայի, 57-րդ շենքի, 83-րդ հասցեում առկա անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվություն, համաձայն որի՝ այն գնահատվել է 42 620 000 ՀՀ*

դրամ, ինչի հիման վրա նշված գույքը 23.04.2020 թվականին կայացված աճուրդում 20.385.100 ՀՀ դրամով վաճառվել է Միքայել Սամվելի Խչեյանին: Մինչդեռ, նշված գույքն անկախ գնահատող «Ափթայմ» ՍՊԸ-ի փորձագետի կողմից 08.06.2020 թվականի դրությամբ գնահատվել է 74.700.000 ՀՀ դրամ, իսկ դատաապրանքագիտական փորձագետի 28.07.2023 թվականի թիվ 23042010 եզրակացության համաձայն՝ դրա արժեքը 2019 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ կարող էր կազմել 69.400.000 ՀՀ դրամ, իսկ 2020 թվականի հուլիս ամսվա դրությամբ՝ 73.900.000 ՀՀ դրամ: Այսինքն Տիգրան Զավենի Սահակյանը հանդիսանալով քաղաքացիական գործով դատաապրանքագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետ, 27.09.2019թ. պատրաստել և իրացրել է Երևան քաղաքի, Կոմիտասի պողոտայի, 57-րդ շենքի, 83-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի արժեքը հավաստող ակնհայտ կեղծ փաստաթուղթ, ինչի հետևանքով այն հայտարարված աճուրդում վաճառվել է իր իրական արժեքից էականորեն ցածր գնով: (…)»[1]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2024 թվականի սեպտեմբերի 10-ի նախնական դատաքննությունների ընթացքում քննության առարկա դարձնելով վարույթի ընդունելիության հարցը մեղադրյալ Տ.Սահակյանը հայտնեց, որ «Էքսպերտ Դիալոգ» ՍՊԸ-ն կամ նախկինում «Էյ Էյ Էս Ըքաունթինգ» ՍՊԸ-ն գործունեության վայրը Էջմիածին քաղաքում է, և այն գործողությունները, որի համար քրեական վարույթ է նախաձեռնվել կատարվել են Էջմիածին քաղաքում, հետևաբար առաջարկում է քննարկել արդյոք վարույթը ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: Հայտնեց, որ չնայած գույքը գտնվել է Երևան քաղաքում, սակայն ամբողջ աշխատանքները՝ գնահատման աշխատանքները կատարվել են Էջմիածին քաղաքում: Հաշվետվությունը գնահատման, որը ներկայումս մեղադրանքի հիմք է, կազմվել է Էջմիածին քաղաքում: Նշեց, որ իր համար սկզբունքային չէ, թե որ դատարանը քննության կառնի վարույթը, սակայն*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 96-97:

հետագայում պարզ լինելու համար նշում է, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է Էջմիածին քաղաքում:

(…)

Մեղադրյալը հայտնեց, որ իր կողմից փաստաթուղթը կազմվել է Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի 47-րդ շենքի 74-րդ բնակարանում, որը ընկերության գործունեության հասցեն է և այդ փաստաթուղթը նույն վայրում տրամադրվել է պատվիրատուին:

Լսելով վարույթի մասնակիցների դիրքորոշումը, ուսումնասիրելով վարույթի որոշ նյութեր, դատարանը գտնում է, որ սույն վարույթը պետք է փոխանցել ըստ տարածքային ընդդատության ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հետևյալ պատճառաբանությամբ.

[Մ]եղադրյալ Տիգրան Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից պարզ չէ, թե որտեղ է վերջինս պատրաստել և իրացրել ակնհայտ կեղծ փաստաթուղթը, այսինքն որտեղ է կատարվել ենթադրյալ հակահրավական արարքը: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ, մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը)»: Վարույթի նյութերով հաստատվում է, որ «Էյ էյ էս Ըքաունթինգ» ՍՊԸ-ն իր գործունեությունը ծավալել է Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի 47-րդ շենքի 74-րդ բնակարանում, որը հիշյալ ընկերության տնօրենի՝ մեղադրյալ Տիգրան Սահակյանի, բնակության վայրն է: Վերջինս պնդում է, որ իրեն վերագրվող ակնհայտ կեղծ փաստաթուղթը պատրաստել է իր բնակության վայրում և նույն վայրում այն տրամադրել է դրա պատվիրատուին, ով վարույթի նյութերի համաձայն հանդիսանում է դատարանի վճռով սնանկ ճանաչված «Կոմս Արտի» ՍՊԸ-ի

սնանկության գործերով կառավարիչ Լևոն Պետրոսյանը: Հետևաբար ենթադրյալ հակահիրավական արարքը տեղի է ունեցել՝ փաստաթուղթը պատրաստվել և իրացվել է Էջմիածին քաղաքում, որն ընդգրկված է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, ինչը նշանակում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն՝ սույն քրեական գործն ընդդատյա է ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ինչ վերաբերում է հանրային մեղադրողի այն փաստարկին, որ գույքը, որի կապակցությամբ տրվել է եզրակացությունը (փաստաթուղթը) գտնվում է Երևան քաղաքում, ապա հարկ է նշել, որ հանցանքի կատարման վայրը որոշելու համար որևէ նշանակություն չի կարող ունենալ, թե որ վայրում է գտնվում այն գույքը, որի վերաբերյալ պատրաստվել է ակնհայտ կեղծ փաստաթուղթը: Մեղադրողի մյուս փաստարկը, որ տրամադրված փաստաթուղթը օգտագործվել է Երևան քաղաքում, ևս չի կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ հանցանքը կատարվել է Երևան քաղաքի դատարանի դատական տարածքում, քանի որ մեղադրյալին չի մեղսագրվում կեղծ փաստաթղթի օգտագործում, ու մեղադրանքի համաձայն նա «պատրաստել և իրացրել է» այդ փաստաթուղթը, իսկ այն ըստ էության օգտագործվել է սնանկության կառավարիչի կողմից, ում մեղադրանք չի ներկայացվել և վերջինս վարույթով հարցաքննվել է որպես վկա: (…)»[2]:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքներում ենթադրյալ հանցանքի կատարման վայրը նշված չէ, հանգել է եզրության, որ վերագրվող ենթադրյալ հակահիրավական արարքը կատարվել է Էջմիածին քաղաքում:*

Տվյալ դիրքորոշմանը Դատարանը հայտնում է իր անհամաձայնությունը, քանի որ դատարանը չի կարող, մեղադրյալին մեղսագրվող փաստական հանգամանքների շրջանակից դուրս որևէ հանգամանք հաստատված համարելով, քրեական գործն

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 65-67:

ուղարկել ըստ տարածքային ընդդատության և դատարանը սահմանափակված է միայն քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ նշված փաստական հանգամանքներով:

Այսպես՝ Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քննիչը և հսկող դատախազը, ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասով իրենց վրա դրված պոզիտիվ պարտականություն, անձին վերագրվող փաստական հանգամանքներում չեն նշել վերագրվող ենթադրյալ հանցագործության կատարման վայրը, որի միակ իրավական բացատրությունը կարող է լինել մեղսագրով ենթադրյալ արարքի կատարման վայրի հայտնի կամ ապացուցված չլինելը: Դատարանը փաստում է, որ այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Բացի դա՝ միայն այն դիտարկումը, որ քրեական գործի նյութերում առկա է տվյալ այն մասին, որ «Էյ Էյ Էս Ընթաունթինգ» ՍՊԸ-ն իր գործունեությունը ծավալել է Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի 47-րդ շենքի 74-րդ բնակարանում, որը հիշյալ ընկերության տնօրենի՝ Տիգրան Զավենի Սահակյանի, բնակության վայրն է կամ մեղադրյալի բանավոր հայտնած տեղեկությունը բավարար չեն հիմնավորելու համար, որ գործն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքին:

Տվյալ դեպքում, սույն քրեական գործի ուսումնասիրության արդյունքում, պարզ է դառնում, որ նախաքննությունն իրականացրել է ՀՀ ՔԿ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժինը, իսկ դատական տարածքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն է, հետևաբար թիվ ԱԴ/1131/01/24 քրեական գործը ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (…)»[3]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 153-167:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի*

համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը (…)»:*

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, հիմք ընդունելով մեղադրյալ Տիգրան Սահակյանի նախնական դատալսումների ժամանակ հայտնած տեղեկատվությունն առ այն, որ իրեն վերագրվող ենթադրյալ կեղծ փաստաթուղթը պատրաստել և իրացրել է Էջմիածին քաղաքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[7]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, գտնելով, որ վարույթի տարածքային ընդդատության հարցը որոշելիս դատարանը սահմանափակված է քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ նշված փաստական հանգամանքներով, իսկ սույն դեպքում ենթադրյալ հանցանքի կատարման վայրը նշված չէ, փաստել է, որ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Բացի այդ, Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը նշել է, որ քրեական վարույթի նյութերում առկա տվյալն այն մասին, որ «Էյ էյ էս Ըքաունթինգ» ՍՊԸ-ն իր գործունեությունը ծավալել է Էջմիածին քաղաքում, որը հիշյալ ընկերության տնօրենի՝ Տ.Սահակյանի բնակության վայրն է, ինչպես նաև մեղադրյալի բանավոր հայտնած տեղեկատվությունը բավարար չեն հիմնավորելու, որ վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[8]:

15. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Տ.Սահակյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից պարզ է դառնում, որ վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող ենթադրյալ հանցանքի կատարման վայրը մինչդատական վարույթի ընթացքում չի պարզվել, հետևաբար, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: Սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում, որի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

16. Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վկայակոչած՝ մեղադրյալ Տ.Սահակյանի՝

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վարույթի ընդդատության հարցի քննության ընթացքում հայտնած տեղեկատվությանը, ապա հարկ է արձանագրել, որ այն **բավարար չէ հիմնավոր հետևության հանգելու, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում,** հետևաբար տվյալ փուլում չի կարող քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հիմք հանդիսանալ:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Տիգրան Ջավենի Սահակյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԱՐԴ/1131/01/24 (ԵԴ1/2015/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ